ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ԼՂ/21-2021 ք.Արտաշատ

„27„ 01 2021թ.

«ՎԵԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ԵՎ«ՎԵԴՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ»ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ,ԳՈՒՅՔԻ,ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՎԵԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ և 116-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի20-րդ ,25-րդ հոդվածներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թվականի օգոստոսի 27-ի N1409 –Ն որոշման պահանջների

Որոշում եմ՝

1. Հաստատել «Վեդու բժշկական կենտրոն »և«Վեդու ծննդատուն»փակ բաժնետիրական ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը:
2. Հաստատել «Վեդու բժշկական կենտրոն »փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռը 2020թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ(կցվում է հաշվեկշիռը):
3. Հաստատել «Վեդու ծննդատուն»փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռը 2020թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ(կցվում է հաշվեկշիռը):
4. Հաստատել «Վեդու բժշկական կենտրոն »փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 18680000 (տասնութ միլիոն վեց հարյուր ութսուն հազար)Հայաստանի Հանրապետության դրամի չափով և ընկերության կողմից տեղաբաշխված մեկ հատ 40000(քառասուն հազար)Հայաստանի Հանրապետության. դրամ անվանական արժեքով հասարակ(սովորական) բաժնետոմսի հաշվեկշռային անվանական արժեքը 40000(քառասուն հազար)Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

5. Հաստատել «Վեդու ծննդատուն»փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 15300000(տասնհինգ միլիոն երեք հարյուր հազար)Հայաստանի Հանրապետության դրամի չափով և ընկերության կողմից տեղաբաշխված մեկ հատ 20000Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով հասարակ(սովորական) բաժնետոմսի հաշվեկշռային անվանական արժեքը 20000(քսան հազար)Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
6. Հաստատել «Վեդու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության գույքի ,այլ գույքային իրավունքների և պարտավորությունների «Վեդու բժշկական կենտրոն » փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը:
7. Հաստատել «Վեդու ծննդատուն»փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված թվով 382(երեք հարյուր ութսուներկու) հատ 40000(քառասուն հազար)Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի փոխարկումը«Վեդու բժշկական կենտրոն » փակ բաժնետիրական ընկերությանբաժնետոմսերի, իսկ 20000(քսան հազար)Հայաստանի Հանրապետության դրամը հանդիսանում է որպես էմիսիոն եկամուտ:
8. Հաստատել տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը (կցվում է կարգը):

Недействительная подпись

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616 Ռ.ԹԵՎՈՆՅԱՆ